րը կռանալով ամենակեղծաւոր եւ հաճելի խօսքեր ասել նրա երեսին — «աղա՛ ջան», «տէր իմ եւ հրամայող», «աչքիս լոյս», «հոգիս», «մենք ամէնքս քո ստրուկներն ենք» եւայլն: Վա՛յ, եթէ բռնկէր նրա բարկութիւնը. անմիջապէս եւ անխնայօրէն իրենց գործը պիտի տեսնէին մտրակը, դաշոյնը, սուրը եւ կամ ինչ որ ձեռքն ընկնէր: Բայց մինչեւ իսկ վերոյիշեալ ծառաները, որոնք այլ պաշտօն չունէին քան եթէ իրենց տիրոջ ոտներն ու ձեռները լուանալ ու ծխամորճ մատուցանել, նրանք էլ պահանջում էին, որ իրենց հանդէպ եւս ցոյց տրուէին հնազանդութեան այսպիսի ապացոյցներ» (Ա. 195–196):

Աբովեանի այս խօսքերին Հաքստհաուզէն իր կողմից աւելացնում է հետեւալը.—

«Եթէ հակառակ թաթարական այս կամայականութեան, հայերի մէջ այնուամենայնիւ գտնել կարելի էր հարստութիւն, մինչեւ իսկ պերճանք, որ հայերը այնտեղ, ուր միայն կարող էին եւ ոյժ ունէին, պաշտպանում էին իրենք զիրենք, որ նրանք այս կամ այն դէպքում մինչեւ իսկ մի չար խանի կամ սարքիարի էին սպանում(?), որ հայերը ինչպէս մի հաւաքական ժողովուրդ հանդէս էին գալիս օտար ժողովուրդի (պարսիկների) հանդէպ, այդ էլ դիւրաւ հասկանալի է»:

Ի՞նչ փաստական տուեալներ է հաղորդում Հաքստհաուզէն, անշուշտ առնելով Աբովեանից, պարսկական տուրքերի քանակի մասին այն ժամանակները:

Իսկապէս բարձր չէին այն տուրքերը, որ պարսից Շահն էր իր կողմից սահմանում՝ մի երկիր գրաւելուց յետոյ,— ասում է Հաքստհաուզէն: Վերջին ժամանակները Քանաքեռում միայն 50–60 ընտանիք են եղել, որոնք իրենց տների, այգիների եւ գինու համար միասին վճարելիս են եղել 25-ական թուման (75 արծաթ ռուբլի, բայց այն ժամանակուայ դրամի բարձր արժէքով՝ 100 արծաթ ռուբլի): Հացահատիկից պիտի տրուէր տասանորդը: Բայց այդ տուրքը չէր առնւում խուրձերով, այլ՝ միայն կալսելուց յետոյ, մէկ տասներորդը: Սարքիարը հաւաքել էր տալիս ամբողջ հացահատիկը կալի մէջ մի տեղ եւ անմիջապէս առնում տուրքի բաժինը:

«Բայց նա չէր գոհանում տասանորդով, ուր որ լուրջ դիմադրութեան չէր հանդիպում, այլ՝ առնում էր մէկ հինգերորդը, մէկ չորրորդը, այո՛, երբեմն մինչեւ իսկ մէկ երրորդը:

«Նախկին սարդարը սկիզբը պահանջելիս է եղել 100 թուման՝ այգիներից եւ գինուց, հացահատիկի էլ մէկ երրորդ մասը (ինչպէս ամբողջ Պարսկաստանում), իսկ յետոյ սկսել է գոհանալ 80 թումանով եւ հացահատիկի մէկ երրորդով: Տեսնում ենք ուրեմն, որ այդ հարկերը սովորական չէին, այլ կրում էին նուաճման տուրքի (Tribut) բնոյթ: Եւ այդ տուրքերը բարձրացնում էին՝ որչափ հնարաւորութիւն ունէին: Երբեմն էլ սակարկում էին եւ զիջում»:

Ինչ վերաբերում է բուն Պարսկաստանի հողային եւ հարկային պայմաններին, այդ մասին Հաքստհաուզէն հաղորդում է հետեւեալը.—

«Այստեղ ամբողջ հողը դիտւում է որպէս Շահի սեփականութիւն: Գոյութիւն ունի հողային ազնուականութիւն, որին Շահը ի տնօրինութիւն է տալիս հողամասեր, նրանց ազատելով տուրքերից (միայն՝ եթէ այս կամ այն կտոր վարելահողի վրայ ցորեն է ցանուած, պարտաւոր են հունձի մէկ երրորդը Շահին տալ): Դրա փոխարէն նրանք պատերազմական ծառայութիւններ են մատուցում Շահին: Մնացած ամբողջ հողից, որ քաղաքների ու գիւղերի բնակիչների ձեռքում է գտնւում, համաձայն օրէնքի՝ Շահը պիտի ստանայ հունձի մէկ երրորդը, անասուններից էլ դրամահարկ. որ է՝ մէկ հատ ձիուց կամ արջառից՝ 1 թաննաբատ (պրուսական դրամով՝ մօտ 5 արծաթ գրօշ), 1 ոչխարից կամ այծից՝ 1 աբբասի (2 արծաթ գրօշ): Տասը հաւից էլ մէկը պիտի տրուի: Իսկ բաղերը, սադերը եւայլն՝ ազատ են տուրքից»:

Այս ամէնը կատարւում էր ոչ թէ հարկահաւաք պաշտօնեաների ձեռքով, այլ սարդարների միջոցով: Ամէն մի առանձին դէպքում սահմանւում էր, թէ հաւաքելի տուրքերից ի՛նչքան պիտի ղրկուի Շահին: Սարդարը իր կողմից կապալով էր տալիս հարկահաւաքութիւնը: Սրանք էլ իրենց կողմից էին անսահման բռնութեան եւ կեղեքման ենթարկում գիւղացիներին: Այնպէս որ «անձնապէս ազատ